ԱՂԲԻՒՐ

Երեսունեւերորդ տարի 1912 № 12 Դեկտեմբեր

Խմբագիր-հրատարակիչ՝ Տիգրան Նազարեանց

ԱԻԵՏԻՔ ԱՐԱՍԽԱՆԵԱՆՑ

Դեկտ. 3-ին Ախալքալաքում, կարճատև հիւանդութիւնից յետոյ, վախճանուեց «ՄՈՒՐՃ» ամսագրի հիմնադիրը, հրապարակախօս, ուսուցիչ, հասարակական գործիչ Աւետիք Արասխանեանց, նա՝ որի անունը ոսկեհատերով է գրուած Շուշւագարդի նշանաւոր համալսարանի պատի վրայ։ Ա. Արասխանեանին գերմանացիք առաջարկեցին Բերլինի համալսարանում պրօֆէսօրութեան ամբիօն, բայց նա քաղցր համարեց հայրենի երկրում լինել, նոյնիսկ գաւառական քաղաքի ծխական մի համեստ դպրոցի ուսուցիչ, քան օտար աշխարհում ուսուցչապետ։ Ախալքալաքից մարմինը մեծ յարգանքով բերին Թիֆլիս և կիրակի, դեկտեմբերի 9-ին թաղեցին Ծօղիվանքի գերեզմանատանը, ուր ամփոփուած են Գր. Աբծրունի, Րաֆֆի, Ծերենց, Աղայեան։

Աւ. Արասխանեանց

† 3 դեկտ. 1912 թ. Ախալքալաք.

Մի թերթիկ անցեալից

Նրա դէմքի վրայ շատ բան կար գրած. բայց նրանց կարդալ չէր կարող ամեն ոք. բառերը գրած էին հրեշտակային փետուրով։ Դուք մօտենում էք նրան և յանկարծ յետ էք քաշւում, որպէս նաւակը նաւավարի ուժգին լիճավարութիւնից։ Մի րոպէ դուք կանգ էք առնում. դուք չըգիտէք անգամ, թէ որտեղ էք կանգնած, բարձրաբերձ ժայռի վրայ, ուր հէնց այն է որ վախենում էք. թէ կըսլըլւէք և անդունդ կըգլորւէք. մարգագետնի վրայ արդեօք, ուր պատրաստ էք ձգւել փափուկ խոտի վրայ, որ գլուխը կորում է յետ ու առաջ վեփիւռի մեղմ շշուկից և պսպղում արեգակի ճառագայթներից. թէ գուցէ երազմա՞ն էք։ Եւ այդ բոլորը ձեզ թւում է կարելի։ Դուք ոչինչ չէք հասկանում այնքան բարակ, քնքոյշ և բանաստեղծօրէն գրած խօսքերից։ Եւ դուք չէք մօտենում, վախենալով ամեն մի շարժմունքից, տեսարանը աչքից չըկորցնելու համար։ Բայց դուք արդէն անշարժ դառաք, կորցրիք զգայութիւնը, որ դուք միայն կամաց կամաց կրկին ձեռք էք բերում

Ա. Ա. Առաքելյանցի ամենաբերին թուաբիլարը



միմիայն վկայելու համար, որ դուք կրկին կանգնած էք անշարժ, աչքերդ չռած դէպի վեր, իբր ոգիներից բըռնուած։ Նայում էք նրա աչքերին և նկատում էք մի ինչոր խորհրդաւոր բան։ Ձեր աչքերը դադարեցին չափազանց մեծ լարումից. դուք կրկին ձեզ կորցնում էք և գրեթէ ուշքից գրկւում։

Բայց դա լոկ պատրանք չէ, վասնզի երազում էք։ Հեռու, հեռու, անտառի խորքերից մինում ձեզ երևեցաւ հրեշտակային քնքշութեամբ մի դէմք. սա ունի իր գլխին դափնեայ պսակ, և նրա վրայ երեք բառ՝

ԼՈՅՍ, ՍԷՐ, ԿԵԱՆՔ։

Դուք գուշակեցիք. զարթնում էք։ Դուք ծնկաչոք ձեր սենեակումն էք տեսնում ձեզ, աչքերդ յառած դէպի երկինք լուսամուտի միջով. և յորդ արտասուք տեղած է յատակի վրայ։ Ձեր առջև ոչոք, բայց դուք պարզ տեսնում էք մի էակ, որը աւելի ու աւելի հեռանում է ձեզանից դէպի վեր, տարածութեան մութ խորքերը և միմիայն աղօտ կերպով դուք նշմարում էք, որ նա հետը տանում է մի պաստառ՝ ազեղնաձև գրած բառերով՝

ԼՈՅՍ, ՍԷՐ, ԿԵԱՆՔ։

Աւ. Արասխանեանց

(ԱՂԲԻՒՐ, 1887 թ.)

Վ. Ագուլիս. Ա. Աբասխանեանցի ծննդավայրը



ՍԵՒ ԺԱՄԻՆ

Մշուշն եկաւ՝ մութ, թանձրամած,
Ու վայ կանչեց խենթ քամին
Եւ ձեան փոշին իր հետն առած՝
Խրճիթ մտաւ սև ժամին։

Մութ խրճիթում աչքը երդին,
Դեռնի վրայ դողահար
Կուչ է եկել մի աղքատ կին՝
Ցրտից կապտած ու նիհար։

Նայում է դուրս... Թղպատ երկինք,
Սուլող քամի մահաշունչ.
Նայում է ցած՝ մի դալուկ դէմք,
Մահուան տագնապ, լուռ ու մունջ։

Ու ձայն չկայ. ահա, ահա
Կը դադարեն շարժուձեր...
Ցանկարծ մի ճիչ... էլ չկայ նա,
Խրճիթն անտէր ու աւեր...

Որդեզուրկ մայր ու խօլ քամի
Մէկտեղ տխուր ողբասաց,
Մահն են լալիս խեղճ չիւանի՝
Սառ թոնրի մօտ մուշ պառկած։

Դուրսը բորան՝ մութ, թանձրամած,
Վայ է կանչում խենթ քամին
Ու ձեան փոշի իր հետն առած՝
Հիւր է գալիս սև ժամին...

Ց. Պետրոսեան

Ի ՄԱՅՑ «ՄՇԱԿԻ» ԽՄԲԱԳՐԻ՝

ԳՐԻԳՈՐ ԱՐՇՐՈՒՆԻ

—

Դո՛ւ հայ ազգի անքուն մշակ,
Ինչո՞ւ բանթող արիր շուտով.
Քո քրտնքի քաղցր վաստակ
Վայելում էինք համով-հոտով։
Դու քահ ու թի ձեռքդ առար,
Մտար երկիր քո հայրենի.
Զազատեցաւ ո՛չ մի գաւառ,
Ո՛չ սար, ոչ դաշտ, ծոր վայրենի։
Ի՛նչ որ ընկաւ քահիդ բերան,
Դուրս խլեցիր ձեռքով ճարտար.
Թէ՛ քոլ, թէ փուշ հազար տարւան՝
Ոչնչացրիր դու անդադար։

Գրիգոր Արծրունի

Մահուան 20-ամեակի առիթով

† *Թիֆլիս 19 դեկտ. 1892 թ.*

Փափկացրած հոդիդ ծալքո մ
Դու ցանեցիր ընտիր սերսեր.
Պտուղ տվին ամեն սրտում
Քո քարոզած սիրո՛ւն մտքեր։
Դու հայ ազգին ծառայեցիր,
Չի՛ ուրանայ, ո՛վ խիղճ ունի.
Նրան քո կեանքը գո՛հեցիր,
Ի՞զի՛ պարծանք, ո՛վ Արծրունի։
Դու թո՛ւփ տ ւր Հայի վրայից
Նրա մտքի հնութեան փո՛շին.
Նոր-նոր ու թարմ՝ Եւրոպայից
Տւիր նրան խո՛ւք թանկագին.
Ժիր «Մշակիդ» յօդուածներով
Մ՛եր մտքի ա՛չքը բաց արիր.
Գիշեր-ցերեկ չարչարւելով՝
Կեանքի ուղին մեզ ցոյց տւիր։
Տարածեցիր ամեն բարի,
Ազնիւ, ընտիր, սուրբ գաղափա՛ր.
Գրիչը ծնոտիդ շուրջ քանի տարի
Առաջ տարար մեզ քաջաբար։
Անխնայաբար դու աչ ու ճախ
Ձեռդ առած պինդ խարազան՝
Մ՛տրակեցիր կեղծն ու խարդախ,
Ճշմարտութեան եղար պաշտպան,
Դու ստեղծեցիր ընթերցողներ,
Գրագէտների մի ստւար բանակ.
Քննող-դատող մտածողներ՝
Ժողովեցիր դրօշակիդ տակ։
Հայրենիքը ա՛խ է քաշում,
Աչքունք թափում ոլո՛ր—ոլո՛ր.
Հայութիւնր սուգ է մտնում,
Կորուստները համրում խոշոր»։

Ի. Ք. Ն.

---

*) Նորերս հանգուցեալ Էմմանուէլ քահանայ Նալպեանցը էր այս անտիպ ոտանաւորը ուղարկել էր մեզ տպագրելու **Տարազի՝ Մշակին** նւիրած ալմանախում, սակայն մենք պատահեցինք և տպագրում ենք ներկայ №-ում։



ՀԱԶՈՒԱԳԻՒՏ ՀԱՏԻԿՆԵՐԸ

ԵՒ

ԱՊԵՐԱՒՏ ՄԱՐԴԸ

(Առասպել)

—

Մեզանից շատ ու շատ առաջ, շատ հին ժամանակ մի խեղճ ու անճար որբևայրի էր ապրում իր մինուճար որդու հետ։

Մի օր առաւօտեան մայրը ասում է որդուն.

—Ա՛ Պետ*, ո՛րդի. վեր կաց, գնա մեր մառանը և տես՝ մեր բաղդից ուտելու բան-ման եթէ մնացել է, հաւաքիր, բե՛ր։

Պետրոսն իսկոյն վեր է կենում, տեփուրը վերցնում, գնում, մտնում մառանը, այնտեղի եղած-չեղած պարէնները հաւաքում տեփուրի մէջ և դուրս գալիս։ Սակայն ոտը դուրս դնելուն պէս իսկոյն վրայ է տալիս հիւսիսային հողմը, լինչպէս քաղցած ուրուր, և տեփուրի միջի բոլոր եղածը յափշտակում է ու ցրիւ տալիս։

---

*) Պետրոս անուան կրճատն է։

Խեղճ Պետրոսը այդպէս յանկարծակիի գալով՝ մնում է շուարուած, ցանուցիր եղող ուտելու պարէնների ետևից պռշկած մոկ տալիս։

Երբ առաջին զօրեղ տպաւորութիւնն անցնում և խեղճ տղան ուշաբերվում է, նա սաստիկ բարկանում է հողմի վրայ և ատամները կրճտացնելով ասում.

«Ձէ՞ որ այդ մեր վերջին պարէնն էր—մեր ուտելիքը. հիմի ի՞նչ հողը պէտք է տանք մեր գլխին»...։

Ասում է և դառնացած սրտով դաստարկաձեռն վերադառնում տուն։

—Մ՛այրիկ,—ասում է Պետրոսը,—դիտե՞ս ինչ եղաւ... հիւսիսային քամին մեզ մեծ զրկանք պատճառեց...

—Ի՞նչպէս. նա մեզ ի՞նչ կարող էր անել,—հարցնում է մայրը։

—...Երբ ես,—շարունակում է խօսքը Պետրոսը,—տեփուրը ձեռքիս դուրս եկայ մառանից, յանկարծ հիւսիսային հողմը անասելի սաստկութեամբ փչեց և տեփուրի մէջի բոլոր եղածը ցաքուցրիւ տուաւ։

—Վա՛յ. վա՛յ, վա՛յ. վա՛յ մեր օրին,—ծնկներին խփելով ասում է խեղճ որբևայրին.—քա հիմի ի՞նչ պէտք է անենք մենք։

—Ա՛յ թէ ինչ, մ՛այրիկ,—պատասխանում է Պետրոսը.—ես մտածեցի գնալ-գտնել հիւսիսային հողմը և ստիպել՝ որ նա մեզնից խլածը յետ տայ։ Լաւ չէ՞մ մտածել, մ՛այրիկ, հը՞. ի՞նչ կ՛ասես։

—Ի՞նչ պէտք է ասեմ, ա՛յ որդի. ի-հարկէ լաւ ես մտածել։ Բայց որ գնաս, կարո՞ղ ես գլուխ բերել այդ բանը։

—Կը տեսնես՝ կարող եմ, թէ չէ,—ասում է Պետրոսը և անմիջապէս ճամբայ ընկնում։

Գնում է, գնում, մինչև որ հասնում է հիւսիսային հողմի սառցային պալատանքին։ Իսկ այդ ա-

պարանքը այնքան մեծ էր, այնքան ընդարձակ, որ նրանից փչող սաստիկ ցուրտը թէ իրա շուրջն էր սառեցրել և թէ շատ հեռաւոր ընդարձակ տարածութիւններ փէտացրել—բոլորովին անշնչացրել։

Հիւսիսայէն հողմը Պետրոսին նկատելուն պէս դէմքը խոժոռում է, յօնքերը կիտում և մօտենալով զայրացած նկատում.

—Դու ինչպէս ես համարձակուել իմ ապարանքին մօտենալ. գիտե՞ս ինչ պատիժ է սպասում քեզ։ Եթէ գլխիցդ ձեռք չես վերցրել, անմիջապէս հեռացիր այս տեղերից... շո՛ւտ։

Սակայն Պետրոսը ոչ-միայն բանի տեղ չի դնում նրա սպառնալիքը, այլ իսկի տեղիցն էլ չի շարժվում։

Հիւսիսայէն հողմը՝ զայրացած և թէ մխաժամանակ հիացած Պետրոսի սրտոտութեան վրայ, աւելի մեղմ ձայնով հարցնում է.

—Ո՞ւր ես եկել. ինչ ես ուզում ինձանից։

—Ես եկել եմ՝ քեզանից պահանջելու մեր ուտելիքը, որ այսօր առաւօտեան դու ցաքուցրիւ տուիր, էլ չմտածելով որ այդ մեր վերջին պարէնն էր։ Ձե՛ւ տուր մեր ուտելիքը, եթէ ոչ՝ ես այստեղից գնացողը չեմ։

Հիւսիսայէն հողմը լսելով Պետրոսի արդարացի պահանջը, ընկնում է մտածմունքի ծովը. միտք է անում, միտք է անում և ապա այսպէս խօսում.

—Հիմա ես ինձ մօտ ոչինչ չունիմ, որ յետ տամ քեզ. սակայն ձեզ հասցրածս զրկանքի փոխարէն ահա՛ քեզ այս հաղուագիւտ, հրաշալի հատիկները կը տամ։ Դու այս հատիկները կը տանես, կը ցանես հողի մէջ. իսկ թէ յետոյ ղրանցից ինչ դուրս կը գան և դու ինչ պէտք է անես, այդ արդէն քո գիտենալիքն է...։ Միայն շո՛ւտ հեռացիր այստեղից, քանի դեռ մութը չի ընկել։ Բայց տե՛ս՝ մինչև ձեր տունն

հանելը յետ չպէտք է մոխիկ տաս, եթէ ոչ՝ այդ հրաշալի հատիկներն էլ այսօրուայ ձեր պարէնի պէս կը յափշտակեմ և ցաքուցրիւ կը տամ։

Պետրոսը հատիկները վերցնում է, դնում գըրպանը և առանց յետ նայելու վերադառնում տունն։

Միւս օրը այդ հատիկները տանում-ցանում է իրանց տափում ու բոլորովին մոռանան անում այդ անցած-դարձածի մասին։

Այդ դէպքից մի որոշ ժամանակ անցնելուց յետոյ մի օր էլ ինչ է տեսնում Պետրոսը. այն տափը, ուր ցանել էր հատիկները, դարձել էր մի անմման, մի ոսկեզօծ, ալէծածան արտ։ Ամեն մի ցօղունի վրայ հարիւրական ատոք հասկեր էին կախուած, որոնք առողջ հատիկների ծանրութիւնից՝ խելօք ու համեստ մարդկանց նման գլուխներն թեքել էին դէպի գետին։ Ողջ արտի մէջ կէնդ մի հատ շարայ չկար, որ մեծամիտ ու յիմար մարդու նման քիթը ցից պահէր։

Պետրոսի ուրախութիւնն անչափ էր։ Թևեր առած այդ անսպասելի յաջողութիւնից, մէն ու մեռնակ հնձում է արդէն հասած արտը, խրձներ կապում, ապա խրձան սայլով կրում, դէզ դնում իրանց կալի մի անկիւնում ու անմիջապէս սկսում կալը պատրաստել՝ որ կասի։

Բերքը այնքան առատ է լինում, որ Պետրոսը սերմացուն ու իրանց ողջ տարուայ պաշարը վերցնելուց յետոյ մնացածն էլ, որ քիչ չէր, շուկայ է դուրս բերում, ծախում։

Միւս գարնանը Պետրոսը մի օրավարի փոխարէն մի քանի օրավար է ցանում, որոնցից՝ իրա ժամանակին նոյնպիսի առատ բերք է ստացվում։

Առաջ Հիւսիսայինն հողմը ցանքերին միշտ մի որևէ վնաս էր հասցնում, կամ բոլորովին ցրտահար անում և այդպիսով արտի վրայ արիւն-քրտինք

թափողների աշխատանքը չուրը մաղում—ոչնչացնում, այն-ինչ հիմա ամենափոքր չափով իսկ փնաս չէր տալիս ցանածներին։

Ինչ ասել կ'ուզէ որ մայր ու որդի ամեն տարի այդպէս առատ հունձ ունենալով, հարստանում են, իրանց համար շքեղ ու ամեն յարմարութիւններով նոր տուն շինում և հանգիստ ու անկարիք ապրում այնպէս, ինչպէս որ շատ ու շատ նոր հարստացածներն են ապրում։ Այն է՝ առաջ ինչ որ իրանց պատիղն էլ չէին տեսել կախ, այժմ տեսնելով իրանց ճակատիցը կախ, շատ են հպարտանում և իսպառ մոռանում իրանց աննախանձելի անցեալը, իրանց քաշած սև ու մուխ օրերը։ Իսկ դրա հետեւանքը այն է լինում, որ նոր հարստացած մայր ու որդին սկսում են քիմ՚ները ցից պահել—շատ բարձրից նայել իրանց չունևոր հարևանների վրայ, և առհասարակ ոչ-ոքի ոչ մի բանով օգնութիւն չեն անում, այլ ապրում են միմիայն իրանց անձնական բաւականութեան համար...։

Եւ որովհետև աշխարհիս երեսին ոչ մի անարժան բան, ոչ մի պախարակելի գործ ու ղղուելի արարմունք երբէք անպատիժ չի մնում, այլ վաղ թէ ուշ մի օր իր արժանի պատիժն է ստանում, նոյն է պատահում և մօր ու որդուն։

Մի անձրևային օր Պետրոսը հեռու տեղից տունն էր վերադառնում. ոտնամանները ամբողջովին ցեխակոլոլ էին եղել։ Երբ հասնում է արդէն հնձելուն մօտեցած արտին, որ շատ էլ հեռու չէր իրանց տանից, ուզում է ցեխոտ ոտնամանները մաքրել։ Այդ նպատակով նա ձեռքը մեկնում է, մի փունջ ոսկեզօծ հասկերից պոկում և սկսում նրանցով մաքրել։

Հաղիւ էր նա այդ գործն աւարտել, որ մէկ էլ յանկարծ, աննպատակի կերպով վեր է կենում հիւսիսային հողմը, կատաղութեամբ անցնում արտի

վրայով, կոտրատում բոլոր ցօղունները, վայր թափում հասկերը և ամեն ինչ հողի հետ հաւասարացնելուց յետոյ Պետրոսի ականջին զայրացած գոռում.

—Ապերախտ և անպիտան մարդ. դու բոլորովին անարժան գտնուեցիր իմ պարգևին, որի շնորհիւ ապրում էք անկարիք ու լիութեան մէջ...: Բաւական չէ որ մայր ու որդի ձեր սիրտը քարացնելով ձեր խեղճ, չունևոր հարևանների տանջանքները սուտ չտեսնելու էք դնում միշտ. բաւական չէ որ ոչ-ոքի ոչ մի բանով չէք օգնում, նոյնիսկ ձեր դուռն եկած ժժքաղդ պանդխտին մի կտոր հացն էլ էք խնայում,—այժմ էլ դու քեզ թոյլ տուիր բանի տեղ չանելու իմ քեզ արած շնորհը...: Դէ, ուրեմն իմացած եղիր, ով ապերախտ, որ այսուհետև այլևս երբէք լիառատ հունձ չէք ունենալու. այլ ինչ էլ որ ցանէք ու ինչքան էլ ցանէք, պէտք է ոչնչացնեմ, դատարկաձեռն թողնեմ ամենքիդ:

Եւ այդ ասելով հիւսիսային հողմը այն է կամենում էր հեռանալ, որ Պետրոսի հաւատարիմ շունը մօտենում է և աղաչական ձայնով ասում.

—Հիւսիսային հողմ, չէ՞ որ եթէ այդ ասածներդ ճշմարիտ կատարես, ես էլ քաղցած կը մնամ, մինչդեռ ես ոչ մի յանցանք չեմ գործել, ոչ-ոքի վնաս չեմ տուել. դոնէ ինձ խղճա և այդ խիստ ու դաժան վճիռդ փոխիր:

—Դէ լաւ,—ասում է հիւսիսային հողմը.—քո բաժինը միշտ կը խնայեմ, սակայն այն պայմանով, որ դու քո ունեցածից մասն ու բաժին հանես չունեցողներին, նոյնիսկ քո ապերախտ տիրոջդ էլ...:

Ահա հէնց այդ ժամանակուանից սկսած՝ մի ցօղունը ոչ հարիւր աւօք հասկեր է ունենում իրա վրայ և ոչ էլ երբևիցէ կատարեալ լիառատ հունձ է ստացվում, այլ միշտ էլ կամ աստիկ հողմերից և կամ որևէ այլ պատահարից շատ կամ քիչ չափով վնասվում են ցանքսերը:

Լևոն Մելիք-Ադամեանց

Ագուլիսի չրչափայքը Օրդուբաթ

ԵՐԿՈՒ ԱՆԳԱՄ ԵՐԿՈՒ ՉՈՐՍ

(Հէքիաթ Զ. Տօպէլիուսի)

Նապաստակն ու սկիւռը այնքան սրտակից բարեկամները էին, որ միմեանց անուանում էին Շլդիկ և Կրծան։

—Բարև Շլդիկ-ընկեր,—ասաց սկիւռը, երբ նրանք անտառում պատահեցին միմեանց։

—Ատածու բարին, Կրծան-ընկեր,—պատասխանեց նապաստակը։

—Այսօր շան հաչոց չես լսել։

—Ես լսեցի միայն Ժամկոչենց Գնդըլիկ—շնիկի հաչոցը։ Բայց ես նրա վրայ իսկի ուշադրութիւն չեմ դարձնում։

—Ի հարկէ։ Ո՞վ է վախենում Ժամկոչենց Գնդըլիկից։ Զարժէ նրանից վախենալ,—հպարտութեամբ նկատեց Շլդիկը,—թէկուզ ձիու չափ էլ մեծ լինէր։

—Ուրի գնանք աշխատանքի,—ասաց Կրծանը։—Ինչ որ դադենք, հալալ կիսենք միմեանց մէջ։ Ինձ բաժին ընկնի ճիշտ այնքան, որքան քեզ, իսկ քեզ՝ այնքան, որքան ինձ։

—Համաձայն եմ,—պատասխանեց Շղիկը։

Ասին ու արին։ Նրանք գնացին աշխատանքի, և ինչ որ ճանկերն էր ընկնում, եղբօր պէս բաժանում էին։

Երբ ոզնի էր պատահում, Կրծանը բարձրանում էր ծառը և Շղիկի համար կարմիր պտուղները էր վայր թափում։ Իսկ երբ պատահում էր անցնել կաղամբի բոստանով, Շղիկը պոկում էր կաղամբի փոքրիկ հիւթալի գլուխները և բերում էր Կրծանի համար։

Մի անգամ նրանք չորս հատ խնձոր գտան մեծ ճանապարհի վրայ։ Լեռնը վաղ առաւօտեան ագարակից գնում էր դպրոց։ Նա իր պայուսակի մէջ հետը վերցրած ունէր մի կտոր հաց, պանիր, մի փոքրիկ շիշ կաթ և չորս խնձոր, որ նրան տուել էր մայրը՝ դպրոցում լաւ թուանշանները ստանալու պատճառով։ Բայց պայուսակի մի անկիւնը ծակուել էր, և խնձորները վայր էին ընկել ճանապարհի վրայ։

Շղիկն ու Կրծանը սկսեցին խնձորները բաժանել։ Սկիւռը առաջինը ուզեց ցոյց տալ իր թուաբանական գիտութիւնը և բաժանեց այնպէս, որ Շղիկին տուեց մի խնձոր, իսկ իրան համար վերցրեց երեք հատ։

—Մի սպասիր, տեսնենք,—նկատեց Շղիկը,—մի՛թէ ուղիղ բաժանեցիր։

Եւ Շղիկը սկսեց նորից բաժանել,—Կրծանին տուեց մի խնձոր, իսկ իրան համար վերցրեց երեք հատ։

—Այդ չեղաւ,—նկատեց Կրծանը։—Ինձ թւում է, թէ դու էլ ուղիղ չես հաշւում։

Եւ նրանք սկսեցին մտածել, գլուխ պատռել, թէ ինչպէս բաժանեն, որ մէկի բաժինը միւսից աւելի չըլինի։

Հէնց այդ ժամանակ ճանապարհին Լեռնը ուզեց մի քիչ բերանը թարմացնել խնձորով. նա որոնեց պայուսակի մէջ ու տեսաւ, որ խնձորները չը կան։

—Երևի, վայր են ընկել,—ասաց նա ինքն իրան և յետ դարձաւ խնձորները որոնելու։ Ճանապարհով նա նկատեց ճանպի մօտ նստած Շղիկին ու Կրծանին, որոնց մօտից խնձորները գլորւել և ընկել էին մի փոսի մէջ։

—Ըհ՛ը, Շղիկն ու Կրծանը,—բացականչեց Լևոնը։—Չէք տեսել իմ խնձորները,—հարցրեց նա։

—Մենք հէնց նոր ուզում էինք չորս խնձոր բաժանել միմեանց մէջ,—պատասխանեց Կրծանը,—բայց ոչ մի կերպ չը կարողացանք այնպէս բաժանել, որ երկուսիս բաժինները հաւասար լինին։

—Դա էլ ինչ դժւար բան է,—ասաց Լևոնը,—ամեն մէկիդ կը հասնէ երկու խնձոր։

—Մ՛թթէ—բացականչեցին զարմացած Շղիկն ու Կրծանը։—Բայց դու որտեղից գիտես այդ։

Ի՞նչպէս թէ որտեղից։ Ես չը գիտեմ, որ երկու անգամ երկու չորս կըլինի։ Դպրոցում ամեն բան սովորեցնում են,—պատասխանեց Լևոնը։

—Ա՛յ քեզ բան։ Բայց դու ամեն բան գիտես։

—Համարեա ամեն բան։ Ես կարող եմ հաշւել նոյն իսկ մինչև եօթն անգամ եօթ, բայց դէնը լաւ չեմ յիշում թւերը։

Շղիկն ու Կրծանը ապշել էին Լևոնի իմաստութեան վրայ։ Նրանք վճռեցին հետևել նրա բարի խորհրդին. փոսից հանեցին խնձորները և սկսեցին բաժանել նրանց *երկու անգամ՝ երկու հոգսի վրայ։*

—Բայց դրանք իմ խնձորներն են,—բացականչեց Լևոնը։

—Ա՛յ քեզ բան, այդ էլ նա գիտէ,—բացականչեցին Շղիկն ու Կրծանը։—Զարմանալի է։ Այս երեխան ամեն բան գիտէ։ Ինչպէս լաւ կըլինէր, որ մենք էլ ընկնէինք դպրոց և դառնայինք այսպիսի գիտնական։

—Եկէք միասին գնանք,—ասաց Լևոնը,—ես հիմա գնում եմ այնտեղ։ Դպրոցում դուք կը մտնէք նստարանի տակը և խելօք կը նստէք, որովհետև այնտեղ ոչոքի չի թոյլատրւում ազմուկ հանելու։

—Իսկ այնտեղ շուն չըկա՞յ,—ուզեց իմանալ Շղիկը։

—Շո՛ւն ես ասում։ Դպրոցում շուն չի լինում։ Պատահում է, որ երբեմն Ժամկոչենց Գնդըլիկը ծածուկ ներս

է մտնում, բայց նրան իսկոյն դուրս են վռնդում այնտեղից։

—Իսկ ելէ՛ն նա մեզ կծէ՛։

—Չէ՛, Գնդըլիկը երբէք չի կծում։ Նա այնպէս բարի է, որ, երբ ես նրա պոչից քաշում եմ, նա միայն ծիծաղում է։

—Ծիծաղո՞ւմ է։ Շլդիկն ու Կրծանը միմեանց նայեցին։ Նրանք երբէք չէին լսել, որ շունը կարող է ծիծաղել։ բայց ինչ բան ասես, որ դպրոցը չը սովորեցնէ։ Շատ կարելի է, որ նրանք էլ ծիծաղել սովորեն։ Եւ երկու ընկերով վճռեցին Լևոնի հետ միասին գնալ դպրոց։

—Մեր մէջ վախկոտ չըկա՛յ,—հպարտութեամբ ասաց Շլդիկը։

Վաղկան նապաստակի և սկիւռի համար ճանապարհը երկար չը թւաց։ Նրանք շուտով հասան դպրոց և աննկատելի կերպով մտան նստարանի տակը։ Մանուկները արդէն նստած էին իրանց տեղերում։ Շուտով ուսուցիչը ներս եկաւ, և դասը սկսւեց։

—Ութ անդամ ո՛ւթ,—հարցրեց ուսուցիչը։

—Ա՛յ քեզ բան, սա աւելի դժւարը է՝ քան երկու անդամ երկուսը,—մտածեցին Շլդիկն ու Կրծանը՝ ականջները սրելով նստարանի տակ։

Բայց հէնց որ դասը սկսւեց, ժամկոչենց Գնդըլիկը զգուշութեամբ ներս մտաւ դասարան։

Նրա ման դալու ձևից երևում էր, որ շատ անդամ են նրան դուրս վռնդել այստեղից. նա պոչը սեղմեց ու մտաւ նստարանի տակը, բայց իսկոյն ինչ-որ բանի հոտ առաւ և մըռռռ... փնթփնթաց։

—Ո՞ւր ես մտել, անպիտան Գնդըլիկ,—բղաւեց ուսուցիչը։—Դուրս կորիր այստեղից։

Բայց Գնդըլիկը արդէն նստարանի տակ էր, որտեղ թաղնւած էր ինչ-որ կասկածելի բան, և նա սկսեց հաջել...

Բարեբաղդաբար, լուսամուտներից մէկը բաց էր։ Շլդիկն ու Կրծանը՝ ճարպիկ ոստիւններ անելով սեղան-

ների և նստարանների վրայով՝ մի ակնթարթում դուրս փախան պատուհանից. Գնդըլիկն էլ իսկոյն նրանց հետեւեց։ Էն տեսնիլն էր, որ տեսան զարմացած մանուկները։ Բարձրացաւ ընդհանուր աղմուկ, աղաղակ, ըղբիջ, և ամենքը վազեցին դէպի պատուհան։ Այս անգամ ոչնչ չը կարողացաւ իմանալ, թէ ուր անգամ ուրը որբևան կըլինի։

Շլդիկն ու Կրծանը շնչասպառ փախչում էին դէպի անտառ, իսկ նրանց յետևից հասէհաս վազում էր Գնդըլիկը։ Բայց այս անգամ Գնդըլիկը բոլորովին բարի չէր. պոչը բարձրացրած և լեզուն հանած նա նոյն իսկ չէր կարողանում հաջել, այլ միայն ճչում էր մի տեսակ ձայնով, ինչպէս անում են որսի շները նապաստակի հետքը գտած ժամանակ։ Այսպէս շարունակւեց մինչև անտառի ծայրը։ Այստեղ Կրծանը արդէն գիտէր իր անելիքը. մի ակնթարթում նա բարձրացաւ սոճու վրայ և անհետացաւ նրա խիտ ճիւղերի մէջ։ Յուսահատ եղած Գնդըլիկը կանգ առաւ սոճու մօտ և սկսեց կատաղի կերպով հաջել։ Բայց այդ բանը ոչ մի օգուտ չըտւեց. Կրծանը այնքան էլ յիմար չէր, որ դուրս գար իր ապահով պատսպարանից։ Գնդըլիկը այնքան հաջեց, որ յոգնեց և ամօթով վերադարձաւ դպրոց։ Այդ միջոցին Շլդիկը արդէն թաղնւել էր անտառում։ Երբ վտանգը անցաւ, երկու ընկերները նորից պատահեցին ցրըդնի թփի տակ։ Եթէ նրանք սովորած լինէին ծիծաղելու, երևի ամբողջ անտառում կը տարածւէր նրանց ուրախ և անզուսպ ըղբիջը։ Թէև նրանք չունէին այդ մարդկային ընդունակութիւնը, բայց և այնպէս նրանք ըստ իրանց կարողացան ծիծաղել իրանց արկածների վրայ։

—Մեր մէջ վախկոտ չըկայ,—հպարտութեամբ հեղնում էր Կրծանը՝ նմանեցնելով Շլդիկի այն ահագին ոսոխիններին, որ նա անում էր Գնդըլիկի առջևից փախչելու ժամանակ։

—Ճիշտ է. բայց դու լսում էիր, թէ ինչպիսի ձայ-

նեը էր հանում Գնդըլիկը,—հարցրեց Շլդիկը՝ ամաչելով այդ ակնարկից իր առաջւայ պարծենկոտութեան վրայ։

—Հաւատս չէր գալիս, որ Գնդըլիկը կարող էր երդել այդպիսի բարակ ձայնով։

—Գնդըլիկը շատ բարի է. նա միայն ծիծաղում է, երբ քաշում են իր պոչից,—շարունակում էր հեգնել Կրծանը։

—Իսկ մենք կարծում էինք, թէ Հեռնը ամեն բան գիտէ։

Այո, դպրոցում կարելի է շատ բան սովորել, թէև չի կարելի ամեն բան ընդունել, ինչպէս *երկու անգամ երկու հորս*։

Ջ. Տ.-Գրիգորեան

ԻՄԱՍՏՈՒՆ ԵՂԲԱՅՐՆԵՐ

(*Բոանիական ժող. հէքիաթ*)

Աշխարհիս երեսին խեղճ մարդկանց թիւն աւելի շատ է, քան հարուստներինը, այդ իսկ պատճառով էլ խեղճերի մասին պատմութիւնները աւելի շատ են լինում։

Մի ժամանակ ապրելիս են եղել երեք խեղճ եղբայրներ, որոնք բացի խելքից ու մէկ էլ մի մատակ ձիուց ուրիշ բան չեն ունեցել։ Բայց ապրելու համար աւելի ձին էր հարկաւոր, քան խելքը, որովհետև վերջինս նրանց համար ոչինչ չէր բերում, իսկ ձին մի կերպ նրանց կերակրում էր։

Մի անգամ դիշերը ձին ախոռից գողանում են. այդ դէպքը եղբայրներին սաստիկ վիշտ է պատճառում։ Ջուր տեղը երկար փնտրելուց յետոյ՝ նրանք նստում են ճանապարհի վրայ և այսպէս խօսում իրար մէջ.

— Սրի խելք խելքի տանք, տեսնենք՝ ով կարող էր մեր ձին գողանալ։

Մեծ եղբայրն ասաց.

—Ես կարծում եմ, որ մեր ձին գողացողը միջին հասակի տէր մարդ է։

—Իսկ եթէ նա միջակ հասակով է, ապա ուրեմն նա սպիտակաւուն մօրուք ունի։

—Իսկ եթէ սպիտակ մօրուք ունի, ապա նրա անունն էլ Մուսա է։

Եւ ահա նրանք ճանապայ ընկան գնացին՝ Մուսա անունով մարդուն գտնելու։ Նրանք գնում էին հեռու և հե՛ռ, գիւղից գիւղ, քաղաքից քաղաք, երկար ժամանակ ճանապարհ կտրում ու անցնում, բայց Մուսա անունով մարդուն նրանք չէին պատահում։ Վերջը եկան հասան մի մեծ քաղաք։ Երբ անցնում էին շուկայի հրապարակով և հետաքրքրութեամբ դիտում ցուցադրուած ապրանքները, յանկարծ լսում են, թէ ինչպէս մի վաճառական փողոցի միւս կողմը եղող մէկին ձայն է տալիս.

—Աբի այստեղ, հարևան Մուսա, միասին դայֆա խմենք։

Եղբայրները կանգ առան ու միասին սկսեցին ականջ դնել։ Ճանապարհով անցաւ սպիտակ մօրուքով միջահասակ մի մարդ։

—Սա անպատճառ նա է լինելու,—շշնջացին եղբայրները իրար ականջին։

Անծանօթը մտաւ իր բարեկամի խանութը, եղբայրները նոյնպէս. իրար բարևեցին, ամենայն քաղաքավարութեամբ նրա առողջութեան մասին հարց ու փորձ արին, իսկ վերջն ասացին, որ նա գողացած ձին պիտի իրենց վերադարձնի, որովհետև նրա կարիքը չափազանց գդալի է եղբայրների համար։

Մուսա անունը կրող մարդը, որ մի հարուստ վաճառական էր, առարկեց, որ ինքը նրանց ձիու մասին ոչինչ տեղեկութիւն չունի, իսկ մօտ եկած հարևանները պնդում էին, որ Մուսան վերին աստիճանի ազնիւ մարդ է։ Բայց քանի որ տղաները իրանց խօսքի վրայ հաստատ կանգնած էին, իսկ Մուսան իրանն էր ասում, դրա համար էլ միա-

սին գնացին դադիի (դատաւոր) մօտ և պատմեցին բոլորը։

Դադին երկար ժամանակ հարթում էր իր մօրուքը և ապա հարցրեց.

—Դուք ինչից եզրակացրիք, որ Մուսան գող է։

Նրանք պատասխանեցին.

—Մենք այդպէս ենք կարծում։

Դադին նորից մտածմունքի մէջ ընկաւ և նայում էր եղբայրներին, իսկ եղբայրներն էլ, լուրջ դէմք առած, նրան էին նայում։ Վերջապէս նա ասաց.

—Այսօր երեկոյեան ինձ մօտ ընթրիքի եկէք։

Երբ եղբայրներն եկան՝ ծառան նրանց համար ընթրիք բերեց։ Ուտելու ժամանակ մեծ եղբայրն ասաց.

—Այսպիսի հաց երբէք չեմ կերել. եգիպտացորենն անպատճառ եկեղեցական հողի վրայ է աճել։

Իսկ երկրորդը լեզուով տրաքացրեց ու ասաց.

—Ապա մէկ փորձեցէք այս գառը. այնքան համեղ է, որ կարծես խոզի մսուցած լինի։

—Կարծում ես,—մտախոհ հարցրեց կրտսերը.—դէհ, եթէ որ այդ գառանը խոզն է մսուցել, ապա ուրեմն դադին էլ իր հօր զաւակը չէ։

Հարևան սենեակից դադին մէկ-մէկ լսում էր եղբայրների խօսածները, որ նրա վրայ շատ մեծ տպաւորութիւն էին թողնում։ Նա իր կաղայի մի ճրպանում լիմօն ճրաւ, իսկ միւսումը ձու և մտաւ հիւրերի մօտ հարցնելու, թէ նրանց լաւ պատուեցին։ Ապա հարցրեց.

—Քանի որ դուք հանելուկներ սիրում էք, ապա իմացէք, աջ ճրպանումս ինչ ունիմ։

Անդրանիկն իսկոյն պատասխանեց.

—Ինչ էլ որ լինի, յամենայն դէպս մի կլոր բան է։

—Իսկ եթէ կլոր է,—աւելացրեց միջնակը,—ուրեմն նա ձեղին է։

—Ձեղին,—հարցնում է կրտսերը.—դա լիմօն է։

Ճիշտ նոյն ձևով էլ լմացան, թէ ինչ կար դադիի ձախ ճրպանում։ Այդ բանը դադուն սոխեց մտածմունքի մէջ ընկնել, և միւս օրը վաղ առաւօտեան մարդ ուղար-

կեց իր կալւածքը՝ գիւղացիների մօտ, հարցնելու համար, թէ որտեղ է աճել այն եգիպտացորենը, որից իրանք հաց են թխել։

Նրանք պատասխանեցին, թէ վերցրւած է եկեղեցապատկան դաշտերից, ուր նա ամենից լաւ է աճում։

Ապա երբ դադիի այն հարցին, թէ վերջերս իրեն ուղարկւած գառը ինչպէս է եղել անուցած, նրանք շփոթւեցան ու պատասխանեցին, թէ սովորական ձևով, ինչպէս միւսները։ Իսկ երբ դադիի մարդիկ ստիպեցին նրանց ճշմարիտն ասել, ապա նրանք խոստովանւեցին, որ իրենց հարևան մի քրիստոնեայ գիւղացի խոզերի սուրուն ունէր, գառը վազել է այն սուրուն և խոզերի հետ միասին է կերակրւել։

Այս պատասխանից յետոյ դադին վազելվազ գնաց Մուսա վաճառականի մօտ, որի խանութի առաջ եղբայրները նստած՝ հանգիստ սպասում էին, թէ գործն ինչ ընթացք է ընդունելու։

—Քեզ ոչ մի բան չի օգնի,—դիմեց դադին վաճառականին,—ձին իրենց տուր։

Տեսնելով, որ դադին էլ եղբայրների օգտին է խօսում համոզւած կերպով, Մուսայի ճարը կտրւում է. վերցնում է նրանց ու տանում իր ախոռը, ուր շատ ձիեր կային, և ամօթահար ասում.

—Շատ գեղեցիկ. մի անգամ կարմրելն աւելի լաւ է, քան հազար անգամ գունատւելը... Մի անգամ, երբ ձիերիս վրայ ապրանք բարձած անցնում էի՝ ճանապարհին մեզ մի ձի մօտեցաւ, մենք նրան էլ բարձեցինք, իսկ այժմ այն ձին ձեզ եմ վերադարձնում այն ժամանակւայ իր վրայ եղած ապրանքի հետ միասին։

Եղբայրները տուն վերադարձան, իսկ դադին ու վաճառականը դեռ երկար նստած էին խանութի առաջ, մէկ բաժակը միւսի ետևից դայֆան խմում ու սուսուփուս իրանց մօրուքները հարթում։

Թարգմ. Գ. Բարուրեանց

ԼՈՒՌ ԳԻՇԵՐԻՆ

Լուռ էր ամեն ինչ, լուռ էր և Ա... գիւղը. այդ լռութիւնը խանգարւում էր միայն ձորակով վազող գետակի աղմուկից, որի ջրերը մի ժամանակ առատութեամբ Ա...-ի գիւղացիներին զովացնում էին և փոխադարձ գուրգուրւում ու սիրւում մանուկներից: Իսկ այժմ... այժմ նա էլ չէր գուրգուրւում, որպէս առաջ, այլ գլորւում էր անգառնալի, աղմկում, մռնչում, անշնչացած վարկեանում քարերին, որ կարծես ուզում էր նրանցից հանել իր միայնութեան վրէժը, բայց վերջիններս ամուր էին կպած յատակին և գլուխները վեր պարզած, կարծես, արհամարհում էին գետակի այդ թոյլ ու ապարդիւն ջանքերը, որ այդքան ջանքերից վերջ պոկած աւազի կտորները բուռն կրքոտութեամբ սղմում էր իր երախների մէջ, գոնէ նրանցից հանելու իր քէնը, բայց սրանց էլ ոչինչ չէր կարողանում անել: Ամուր էին... վերստին աղմկում էր յուսահատական ճչով իր թոյլ ուժերի կարելոյն չափ, կարծես, օգնութիւն կանչելու մէկին, բայց նրա ձայնը մեռնում էր անպատասխան հեռու լեռներում: Զարմանալի է, թէ ինչու այնքան մռայլ են լինում մեծ ոճիրներին յաջորդող պիղծները...

Մեղադրում էր խաւարը. երկինքը ծածկւել էր միաձոյլ ամպերով, և մռայլ խաւարը, կարծես, իջնում էր, կլանելու, ոչնչացնելու միայնակ առւակին, որի ջրերը աղմկով ու յուսահատական թափով պատրաստւում էին թոյլ կուրծքները դէմ տալու իջնող մռայլութեանը, իսկ ալիքները փոքր երախները բաց արած՝ ելնում իջնում էին ու աջող բոպէի սպասում, որ նետւեն իջնող հրէշի դէմ:

Արդեօք ինչու էր լռել Ա... գիւղը, ինչու էր թագնւել լուսինը սև ամպերի տակ ու էլ իր պատկերը չէր դիտում առւակի հայելանման ջրերում, և ինչու էր գետակը այդպէս խելահեղ վազում աղմկելով սովորականից աւելի. ահա, սրան պատասխանել կարող էր միայն մի պատանի, որը նոյն վիճակի մէջ էր, ինչոր գետակը... ան միայն անյայտ ոճրագործներից ազատւած, որոնք կենդանի շունչ անգամ չէին Ա... գիւղում, գնում էր պահւելու, թաղելու իր ցաւերով, լի ծանրաբեռնւած գլուխը գերեզմանի յեղյեղուկ գրկում...

Զմրուխիլ

ՄՏՔԵՐ

Մարդիկ հաւատով չենչումեն, յոյսով ապրում են, սիրով երջանիկ են, բայց միշտ էլ դժգոհ են մեռնում։

—

Մենք մեր յաջողութեան և բարեփոխութեան ժամանակ յաճախ մոռանում ենք մահուան գոյութիւնը։

—

Կեանքը մահուան անխոնջ մրջակն է. իսկ մահը խստապահանջ տէր, որի իւրաքանչիւրը պատուէրը վերջանում է ըներ և տուր բառերով։

—

Կեանքը իր բոմը միայն՝ մի փոքրիկ բուրաստանի է նման. իսկ մահը խոռչակ կամ թաթառ որ խամրեցնում է ամեն ինչ։

—

Թշուառների, ճնշուածների և աղքատների համար, մահը սովորական և բնական երևոյթ է. իսկ ընդհակառակն՝ արտօնեալների, անմահների և հարուստների համար արտասովոր և անբնական է թուում։

—

Կեանքը ոչ այլ ինչ է, եթէ ոչ մահ։

—

Մի հանգամանք միայն ինձ շատ է մխիթարում, այդ այն է, որ բոլորն էլ մահկանացուներ են։

—

Երջանիկ բառը, սխալմամբ է սպրտել համամարդկային բառարանի մէջ։

—

Աղքատութիւն և կարիք երբ մտնում են տուն, առաջին դիմաւորող ու ընդունող կինն է լինում։

—

Գրողի համար ամենամեծ թշնամին կարիքն է։

—

Գրիլ այն՝ ինչ որ մոռածել, զգացել և ապրել ես կեանքի մէջ. այդ երկը կըլինի և տաղանդաւոր և գեղունի և անզուգական գրուածք։

—

Մանկութիւնը կեանքի նոր տողն է։

Պատանեկութիւնը՝ ստորակէտ,
Երիտասարդութիւնը՝ միջակէտ,
Իսկ ծերութիւնը՝ վերջակէտ
կամ բազմակէտ...

—

Զը կայ, չէ եղել և չըպիտի լինի մի Աստուած, որի հաւատացեալներն այնքան սրբապղծութիւն գործած լինին՝ ինչքան որ գործել են դրամի երկրպագուները։

Ռ Է Ն

ԱՅԳԵՊԱՆ

(ՆԻԷՐ 1500 ԱՄԵԱՅ ՀԱՅ ՏԱՌԻՆ)

Երբ ողջ երկիրը երաշտից այրւում
Եւ դաժան սովն էր դռները բախում,
Երբ մարդիկ անոյժ գոռում էին գոչում
Նրանց ձայները ձեզ էին կանչում...

Իսկ դու քաջ հերոս, մշակ-այգեպան,
Շունչ, հոգի տըւիր դաշտերին խոպան.
Բուռն եռանդով սուրը գործի կպար
Մեր մութ աշխարհին լոյս տալու համար...

Երբէք քեզ չընկճեց ոչ բուք ու բորան.
Եւ ոչ արևը կիզիչ ամառւան.
Կուչ ու ձիգ գալով, սև օր քաշելով
Դու աշխատում էիր քեզ միշտ յոյս տալով...

Անցան տարիներ դառն տանջանքի
Տեսար պտուղը քո աշխատանքի...
Կարծես կրծքիդ տակ վարդեր բացւեցան,
Մէջքիդ վրայից տարիներն ընկան...

Եւ դու ժպտացիր անմեղ մանկան պէս
Մարմդ փթթեց երազներ պէս-պէս...
Ու քեզ հարց տւիր. «Երդեօք աշխարհում
Ամեն օր ինձպէս ուրախ է ապրում»։

Քո այդ ժպիտով մենք էլ խնդացինք,
Քո աշխատանքով մենք էլ ապրեցինք.
Այժմ սիրելի մեր քաջ այգեպան
Թող քո անունը յիշւի յաւիտեան...

Այսօր քո տօնն է ազնիւ վաստակի.
Տօնը քո վսեմ մեծ աշխատանքի.
Հանգիստ ու դադար Սուրը ոսկորներիդ,
Թող անմահ մնայ քո վսեմ հոգիդ...

Վարսիկ

Աշակերտուհի VI դաս. Թիֆ. Յսվ. Մարիամ. Ուսուհ.

ԿՏՊՈՅՏ ԿՐԿԿ

(Հէֆիաթ)

Լինում է չի լինում մի թագաւոր. նրա զօրքերում լինում է մի քաջ հաւատարիմ զինուոր։ Երբ պատերազմից վերադարձաւ վիրաւորւած և գնաց հայրենիք, թագաւորն ասաց.

—Կորիր գնա, այլևս հարկաւոր չես։

Զինուորը հնայ քաղցած. գնաց հասաւ մի անտառի, տեսաւ այնտեղ մի կրակ հեռուից վառւում է։ Մօտեցաւ այն կրակին։

Այնտեղ բնակւում էր մի կախարդ պառաւ։ Զինուորը խնդրեց թոյլ տալ իրան գիշերել այնտեղ։ Պառաւն ասաց. ով է փախստականին տեղ տալիս, բայց ես կընդունեմ այն պայմանով, որ դու կատարես իմ բոլոր պատւէրները։

—Ի՞նչ կը հրամայես, հարցրեց զինուորը։

—Ես կը հրամայեմ որ էգուց իմ պարտէզը փորես։

Մի՛ւս օրը զինուորը վաղ առաւօտեան վեր կացաւ, պարտէզը փորեց, բայց ինչքան աշխատեց, չը կարողացաւ վերջացնել։ Պառաւը ասաց.

—Այս գիշեր ինձ մօտ մնա, առաւօտն էլ մի քեռ փայտ կըտրատիր ինձ համար։

Զինուորը առաւօտը փայտ կըտրատեց։

Պառաւն ասաց՝ այս գիշեր էլ ինձ մօտ մնա, մի թեթև գործ պիտի կատարես։ Մօտիկ փոսի մէջը կապոյտ կրակ կայ, դու պէտք է հանես։

Մի՛ւս օրը պառաւը տարաւ նըրան փոսի մօտ, իջեցրեց նրան մէջը։ Զինուորը կրակը գտաւ։

Պառաւը զինուորին դուրս հանեց, բայց դեռ բերանը չը հասած՝ ձեռքը մեկնեց որ կրակը խլի։ Սակայն զինուորը չէտ քաշեց ձեռքը։ Յանկարծ պարանը կտրւեց և զինուորը թաւալագլոր ընկաւ փոսի խորքը։ Զինուորը յիշեց, որ իր գրպանում ծխախոտ կայ, հանեց վառեց կապոյտ կրակից՝ տեսաւ. որ մի սև թզուկ կանգնեց առաջին։ Թզուկը ասաց՝

—Ի՞նչ ես կամենում, պատրաստ եմ կատարելու։

Զինուորը սարսափահար ասաց՝ ի՞նչ կարող եմ հրամայել։

—Թզուկն ասաց՝ ինչ որ սիրտդ ուզի։

—Զինուորն ասաց՝ ես կը հրամայեմ ինձ փոսից հանես։

Թզուկը տարաւ նրան այն ճանապարհով, որտեղ գտնւում էին պառաւի գանձերն ու հարստու-

թիւնը: Զինուորն այնքան ոսկի վերցրեց, որ հազիւ էր կարողանում տանել:

Քիչ ժամանակից յետոյ թագուհը հարցրեց՝ ինչ ես կամենում:

—Պառաւին տար դատաւորի մօտ:

Թագուհը կատարեց հրամանը: Զինուորը նորից ծխախոտ վառեց և թագուհն խնդրեն եկաւ:

—Այս րոպէիս հրամայում եմ՝ գնայ թագաւորի պալատը և նրա աղջիկը բեր ինձ մօտ:

Գիշերը թագուհը բերեց աղջկան, որ սկսեց ծառայել զինուորին, որպէս հասարակ աղախին: Մի քիչ ժամանակից յետոյ թագուհը տանում է աղջկան պալատ: Աղջիկը պատմում է հօրը եղելութիւնը. հայրն ասաց.

—Այդ ինչ լաւ երազ ես տեսել: Միւս օրը թագուհը նորից գնաց թագաւորի աղջկանը բերեց զինուորի մօտ և նա նորից սկսեց իր ծառայութիւնը կատարել ու էլի տարաւ պալատը: Աղջիկը պատմեց հօրը: Հայրը ասաց.

—Այս գիշեր կօշիկիդ մինը հագի, միւսը մի հագիր, որպէսզի սրանով զինուորին գտնենք:

Աղջիկը այնպէս էլ արաւ: Թագուհը եկաւ տարաւ աղջկան: Իսկ երբ աքաղաղները կանչեցին՝ նորից տարաւ իր տեղը:

Առաւօտը թագաւորը հրամայեց ման գալ բոլոր տեղերը ու գտնել զինուորին:

Զինուորին գտան և խիստ պատիժ տուին, բանտարկեցին: Նա մոռացել էր իր կապոյտ կրակը, տեսաւ իր ընկերներից մէկին՝ ասաց:

—Գնայ իմ տունը արկղիկս բեր: Ընկերը կատարեց պատւէրը: Զինուորին վճռել էին կախել: Կախաղանի մօտ ասաց՝ իրաւունք տուէք, որ մի ծխախոտ քաշեմ:

Թագաւորը իրաւունք տուաւ:

Զինուորը կպցրեց իր ծխախոտը, տեսաւ եկաւ մի թգուկ մի մեծ փայտ ձեռքին: Թգուկն ասաց՝

Ի՞նչ ես հրամայում:

—Զինուորն ասաց՝ ես հրամայում եմ, որ դու կոտորես այս բոլոր կանգնածներին, նոյնիսկ թագաւորին էլ:

Թգուկը յարձակուեց ժողովրդի վրայ և սկսեց անխնայ կոտորել: Թագաւորը զարհուրած այդ բանից, կեանքը ազատելու համար, երկիւղից տուեց աղջկան զինուորին և հետն էլ իր թագաւորութեան իրաւունքը:

Սիրանոյշ Սահակեանց

(Աշակերտուհի Ղամարլուի ծխական դպրոցի 5-րդ բաժանմունքի)

ԽԱՄԱՆՑ

1) Հարցականների տեղ դրէք տառեր և դասաւորեցէք՝ այս բառերը այնպէս, որ վերևից ներքև աւելացրած տառերով կարդացւի մի նշանաւոր վիպասանի անուն և ազգանունը։

Կա?իճ	*Ա?թք*
	Ա?սի
Կա?իկ	*Զա?գի*
	Տա?ան
Վա?առ	*Ճա?ակ*
	Վա?օդ
Օր?ակ	*Է?ամ*

2) Ես մի ածական անուն եմ. եթէ իմ առաջի տառը փոխէք, ես կըդառնամ ընտանի թռչուն, իսկ եթէ կրկին փոխէք իմ առաջի տառը, ինձ կըտեսնէք ջրի վրայ...

Արաջարկ. Աշոտ Գասպարեան

ԹԻՒԲԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐ

9	+	+	*5*	
+	*5*	*7*	+	
+	*9*	*4*	+	
8	+	+	*6*	
2	**6**	**9**	**5**	**5**

3) Հարկաւոր է խաչերը փոխել թւանշանների, որպէսզի ստացւի գծի տակ գրած գումարը։ Առանց եղած թւանշանները փոփոխելու։

4) Ես երկու վանկանի երկու գործողութիւն եմ բաժան-բաժան. եթէ միացնէք իրարու, այն ժամանակ ես կըլինեմ մի յատուկ գոյական, վայրենի թռչուն։

5) Ես երկու վանկանի յատուկ գոյական անուն եմ. եթէ իմ առաջին վանկս կարդաք, ես կըլինեմ Մասիս սարի մի մասը, եթէ երկրորդ վանկս կարդաք, կըլինեմ մարդու ամենադլխաւոր մարմնի մի մասը։

Առաջարկ. Մ. Քեշիշեանց

XXXI ԱՂԲԻՒՐ-ՏԱՐԱԶԻ XXIV

1913 թ. յաւելուածներն ու պրեմիաները՝

I. *Ս. ՍԱՀԱԿ*: II *Ս. ՄԵՍՐՈՊ*: III Հայոց Վեհափառ Հայրիկը Օտականում: IV **ՎԵՀՓԱՌԻ ԻՋՄԻԱԾԻՆ**: (*18 գոյնով*) V *ԻՋՄԱՆ Ս. ՏԱՃԱՐԸ*: VI **Ս. ԷՋՄԻԱԾԻՆ 18-ՐԴ ԴԱՐՈՒՄ**: VII *ՎԵՀԱՓԱՌ ԻՋՄԻԱԾԻՆ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ*: VIII *ՈՒԽ ՀԱՅԱՍՏԱՆԻ*: IX *Վեհափառ Իջմիածին Սանահնում*: X Իր ընախմբով: XI *ՃԱՆԱՊԱՐՀԻՆ*: XII *Ներսիսեան ուսումնարանի հիմնադրութիւնը*: XIII *ՇՐՋԱԳՈՒՅՐԸ ՍԱՆԱՀՆՈՒՄ*: XIV *ՊԱՏԳԱՄԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ*: XV Գեղափիլիկ-օրացոյց **1913** թ. XVI *ՄԱՆԿԱԿԱՆ - ԱՇԽԱՐՀ*: XVII *ՏՕԲԻ ԵՒ ՄԱՀԻ*: XVIII *Թատրոն եւ Երաժշտութիւն*: XIX *ԱՌՈՂՋԱՊԱՀ*: XX *ԱՂԲԻՒՐԻ ԱԿՈՒՆՔ*: XXI *ՄԱՆԿԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ*: XXII Իւիճուռոյց մի պիէս: XXIII *Հազար-հինգ-հարիւր ամեակ Հայ գրի*: XXIV *Զորս-հարիւր ամեակ Հայ տպագրութեան*: XXV *ԽՕՍՔ ԵՒ ԳՈՐԾ*:

Դպրոցական աշակերտների համարը

ԱՂԲԻՒՐ-ՏԱՐԱԶ *բոլոր* 25 *յաւելուածներով, պրեմիաներով տարեկան* **5** *ր.,* **ԱՂԲԻՒՐԸ** *առանց պրեմիաների* **2** *ր.*

Բացած է 1913 թ. ժամանորդագրո թիւնը

XXXI ԱՂԲԻՒՐ եւ ՏԱՐԱԶ XXIV

ԳՐԱԿԱՆ, ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ, ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ՓՆՆԱԴԱՏԱԿԱՆ, ՔՂԱՔԱԳԻՏԱԿԱՆ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԷՍՆԵՐԻ

Հրատարակւում են ճոխ, բազմաբովանդակ, մանակցութեամբ մեր և եւրոպական յայտնի գրականագէտների, արւեստագէտների, գեղագէտների և մանկավարժների։

Անընդհատ 30 *տարիներ լոյս տեսնող* ԱՂԲԻՒՐԻ *և* 23 *ձիզ տարիներ հրատարակւող Տարազի մասին ասել, թէ ինչպէս լոյս կը տեսնի 1913 թւականին* ԱՂԲԻՒՐԸ *իր* 31*-րդ տարեշրջանում, կամ* ՏԱՐԱԶԸ *իր* 24*-րդ տարեշրջանում, մենք վայելուչ չենք գտնում խօսքերով ասել։ Այդ խօսքը պատկանում է հայութեան։ Մենք անտրտունջ կը շարունակենք մեր գործը, թեւակոխելով* ԱՂԲԻՒՐԻ *հոյլորդ տասնամեակը, այնպէս, ինչպէս թելադրում է մեզ մեր գիտակցութիւնը։ Մենք ծառայում ենք մեր սիրած գործին, հաւատարիմ մեր կոչման։ Իսկ վերջը, մի օր եթէ հայութիւնը սթափւի, նա թող իր նախորդից հաշիւ պահանջէ և լինի նրա դատաւորը։ Իսկ մենք անվհատ կընթանանք առելի մեծ խնդակցութեամբ և 1913 թւականին։*

Բաժանորդագրութեան պայմաններ

ԱՂԲԻՒՐ՝ տարեկան 3 *ր. (Արտասահման* 5 *ր.)* ԱՂԲԻՒՐ-ՏԱՐԱԶ *բոլոր յաւելուածներով եւ պրէմիաներով տարեկան* 10 *ր. (Արտասահման* 18 *ր. կամ* 50 *ֆր.)*

Ապառիկ եւ մաս մաս ժամանորդագրութիւն չէ ընդունւում։

Հասցէն՝ Тифлис, Редакція „АГБЮР“ *կամ* „ТАРАЗ“.
Tiflis, (Caucase) Direction Agbür *կամ* Taraz.

Խմբագիր-հրատարակիչ՝ ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆ.

Тифлисъ, Типографія „Гермесъ“ Графская ул., № 6.